Գլխավոր տեղեկություն	
Համար	N 1439-Ն
Տիպ	Որոշում
Ակտի տիպ	Պաշտոնական Ինկորպորացիա (23.07.2023-մինչ օրս)
Կարգավիճակ	Գործում է
Սկզբնաղբյուր	ՀՀՊՏ 2007.12.26/66(590) Հոդ.1345
Ընդունող մարմին	ՀՀ կառավարություն
Ընդունման ամսաթիվ	15.11.2007
Ստորագրող մարմին	ՀՀ վարչապետ
Ստորագրման ամսաթիվ	17.12.2007
Ուժի մեջ մտնելու ամսաթիվ	05.01.2008

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 նոյեմբերի 2007 թվականի N 1439-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՅՑԵԼԵԼՈՒ ՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՅՑԵԼԵԼՈՒ ՀՐԱՎԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ ԵՎ ՏԻՊԱՅԻՆ ՁԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(վերնագիրը փոփ. 13.07.23 N 1175-Ն)

Համաձայն «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 2-րդ և 6-րդ մասերի պահանջների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետություն այցելելու հրավերների հաստատման և հաշվառման կարգը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) ***(ենթակետն ուժը կորցրել է 13.07.23 N 1175-Ն)***

3) Հայաստանի Հանրապետություն այցելելու հրավերի նկարագիրը և տիպային ձևը՝ համաձայն NN 3 և 4 հավելվածների:

(1-ին կետը փոփ. 13.07.23 N 1175-Ն)

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության վարչապետ **Ս. Սարգսյան**

2007 թ. դեկտեմբերի 17
Երևան

Հավելված N 1
ՀՀ կառավարության 2007 թվականի
նոյեմբերի 15-ի N 1439-Ն որոշման

Կ Ա Ր Գ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՅՑԵԼԵԼՈՒ ՀՐԱՎԵՐՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ԵՎ ՀԱՇՎԱՌՄԱՆ

1. Հայաստանի Հանրապետություն այցելելու հրավերը փաստաթուղթ է, որը հիմնավորում է օտարերկրացու մուտքը և գտնվելը Հայաստանի Հանրապետության տարածքում՝ դրանում նշված նպատակներով և ժամկետներով:

2. Օտարերկրացուն Հայաստանի Հանրապետություն այցելելու հրավեր կարող են տալ Հայաստանի Հանրապետությունում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացին, Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացին, Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձինք, Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դեսպանությունները, հյուպատոսական հիմնարկները և միջազգային կազմակերպությունները կամ դրանց ներկայացուցչությունները:

3. Օտարերկրացու՝ Հայաստանի Հանրապետություն այցելելու հրավերը հաստատման ներկայացնելիս Հայաստանի Հանրապետությունում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացին Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության միգրացիայի և քաղաքացիական ծառայություն (այսուհետ՝ ծառայություն) է ներկայացնում իր անձնագիրը, Հայաստանի Հանրապետություն այցելելու հրավերը, պետական տուրքի վճարման անդորրագիրը, հրավիրվողի անձնագրի պատճենը:

4. Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացին Հայաստանի Հանրապետություն այցելելու հրավերը ծառայություն հաստատման ներկայացնելիս ներկայացնում է իր անձնագիրը, կացության քարտը կամ Հայաստանի Հանրապետության հատուկ անձնագիրը, Հայաստանի Հանրապետություն այցելելու հրավերը և պետական տուրքի վճարման անդորրագիրը, հրավիրվողի անձնագրի պատճենը:

5. Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձինք օտարերկրացու՝ Հայաստանի Հանրապետություն այցելելու հրավերը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն հաստատման ներկայացնելիս Հայաստանի Հանրապետություն այցելելու հրավերին կից ներկայացնում են Հայաստանի Հանրապետության իրավաբանական անձանց պետական ռեգիստրի կողմից տրված պետական գրանցման վկայականի պատճենը, հրավիրվողի անձնագրի պատճենը և պետական տուրքի վճարման անդորրագիրը:

6. Հայաստանի Հանրապետության պետական մարմինները, տեղական ինքնակառավարման մարմինները, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դեսպանությունները, հյուպատոսական հիմնարկները և միջազգային կազմակերպությունները կամ դրանց ներկայացուցչություններն օտարերկրացու՝ Հայաստանի Հանրապետություն այցելելու հրավերը Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն հաստատման ներկայացնելիս հրավերին կից ներկայացնում են նաև պետական տուրքի վճարման անդորրագիրը:

7. Հայաստանի Հանրապետությունում աշխատելու նպատակով տրվող հրավերն օտարերկրացիների աշխատանքի և զբաղվածության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի հաստատմանը ներկայացնելիս գործատուն ներկայացնում է հրավերը, գործատուի պետական գրանցման վկայականի պատճենը, Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների աշխատանքի և զբաղվածության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի կողմից օտարերկրացուն տրված աշխատանքի թույլտվության պատճենը և պետական տուրքի վճարման անդորրագիրը:

8. Հայաստանի Հանրապետությունում բնակվող Հայաստանի Հանրապետության քաղաքացու կամ Հայաստանի Հանրապետությունում կացության կարգավիճակ ունեցող օտարերկրացու կողմից տրված Հայաստանի Հանրապետություն այցելելու հրավերներն առավելագույնը 15-օրյա ժամկետում հաստատում է ծառայությունը, իսկ Հայաստանի Հանրապետությունում գրանցված իրավաբանական անձանց, Հայաստանի Հանրապետության պետական մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների, Հայաստանի Հանրապետությունում հավատարմագրված դեսպանությունների, հյուպատոսական հիմնարկների և միջազգային կազմակերպությունների կամ դրանց ներկայացուցչությունների կողմից տրված Հայաստանի Հանրապետություն այցելելու հրավերները՝ Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը: Հայաստանի Հանրապետությունում աշխատելու նպատակով տրվող հրավերն առավելագույնը 15-օրյա ժամկետում հաստատվում է Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների աշխատանքի և զբաղվածության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմնի կողմից:

9. Հայաստանի Հանրապետություն այցելելու հրավերները հրավերը հաստատող մարմնի կողմից 3 աշխատանքային օրվա ընթացքում ներկայացվում են Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ազգային անվտանգության ծառայության համաձայնեցմանը, որն էլ 7-օրյա ժամկետում հրավերը հաստատող մարմին է ներկայացնում հրավերի հաստատման նպատակահարմարության վերաբերյալ իր դիրքորոշումը:

10. Հրավերը հաստատող մարմնի կողմից հրավերի հաստատումը կարող է մերժվել, եթե առկա են «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ

հոդվածի 1-ին մասում նշված հիմքերը, կամ այն դեպքում, երբ հրավիրողի կողմից խախտվել են «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 4-րդ մասում նշված իր պարտավորությունները:

11. Հրավերն ստանալուց հետո 15-օրյա ժամկետում հրավերը հաստատող մարմինը հրավիրողին գրավոր հայտնում է հրավերի հաստատման կամ մերժման մասին:

12. Լիազոր մարմնի կողմից հրավերը հաստատվելուց հետո հրավիրվող օտարերկրացու անունը, ազգանունը (առկայության դեպքում՝ հայրանունը), ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, բնակության երկիրը և հասցեն, այցելության նպատակի և այցելության ժամկետի վերաբերյալ տվյալները մուտքագրվում են համակարգչային ցանց՝ համապատասխան օտարերկրյա պետությունում առկա Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի հասցեով:

13. Հայաստանի Հանրապետություն այցելելու հրավերները հրավերը հաստատող պետական կառավարման մարմինների կողմից հաշվառվում են համակարգչային եղանակներով:

14. Համակարգչային եղանակով հաշվառված հրավերը պարունակում է հրավիրվողի ազգանունը, անունը (առկայության դեպքում՝ հայրանունը), սեռը, ծննդյան օրը, ամիսը և տարեթիվը, քաղաքացիությունը, ծննդավայրը, այցելության ժամկետը, այցելության նպատակը, հրավերի հաստատման կամ մերժման օրը, ամիսը, տարեթիվը, մերժման դեպքում՝ պատճառը, փաստաթղթերի ընդունման օրը, ամիսը և տարեթիվը:

(հավելվածը խմբ. 13.07.23 N 1175-Ն)

Հավելված N 2
ՀՀ կառավարության 2007 թվականի
նոյեմբերի 15-ի N 1439-Ն որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՅՑԵԼԵԼՈՒ ՀՐԱՎԵՐՆԵՐԸ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼԻՍ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ

(հավելվածն ուժը կորցրել է 13.07.23 N 1175-Ն)

Հավելված N 3
ՀՀ կառավարության 2007 թվականի
նոյեմբերի 15-ի N 1439-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՅՑԵԼԵԼՈՒ ՀՐԱՎԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐԸ

1. Հայաստանի Հանրապետություն այցելելու հրավերի վերևի մասում, ձախ կողմում նշվում է հրավերը հաստատող մարմնի անունը, իսկ աջ կողմում տեղ է հատկացված հրավերի հաստատման կամ մերժման վերաբերյալ նշում կատարելու համար: Նշվածից ներքև կենտրոնում պատկերված է Հայաստանի Հանրապետության զինանշանը:

2. Հայաստանի Հանրապետության զինանշանից ներքև գրված են «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՅՑԵԼԵԼՈՒ ՀՐԱՎԵՐ» բառերը, որոնց աջ կողմում նախատեսված է տեղ հրավերի համարը նշելու համար:

3. Այնուհետև նշվում են՝

1) հրավիրողի ազգանունը, անունը (առկայության դեպքում՝ հայրանունը), իսկ «Օտարերկրացիների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասի «գ» և «դ» կետերով նախատեսված դեպքերում՝ հրավիրողի անվանումը, կազմակերպաիրավական ձևը.

2) հրավիրողի բնակության վայրը (գտնվելու վայրը) և հեռախոսահամարը.

3) հրավիրվողի ազգանունը, անունը (առկայության դեպքում՝ հայրանունը).

4) հրավիրվողի ծննդյան օրը, ամիսը և տարեթիվը, ծննդավայրը.

5) հրավիրվողի բնակության երկիրը և հասցեն, քաղաքացիությունը, սեռը.

6) հրավիրվողի մասնագիտությունը կամ զբաղմունքի տեսակը.

7) հրավիրվողի՝ Հայաստանի Հանրապետություն այցելելու հրավերի նպատակը.

8) հրավիրվողի՝ Հայաստանի Հանրապետություն այցելելու ժամկետը:

4. Ծառայություն ներկայացվող հրավերների դեպքում հրավերում նշվում են նաև հրավիրողի ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը և ծննդավայրը, հրավիրողի աշխատանքի (ուսման) վայրը, հրավիրողի անձնագրի սերիան և համարը, տալու և վավերականության ժամկետները, հրավիրվողի հետ ժամանող մինչև 18 տարեկան երեխաների ազգանունները, անունները (առկայության դեպքում՝ հայրանունները) և նրանց ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը:

(4-րդ կետը փոփ. 13.07.23 N 1175-Ն)

5. Հայաստանի Հանրապետությունում աշխատելու նպատակով տրվող հրավերում նշվում է նաև տեղեկատվություն գործատուի մոտ հրավիրվողի կողմից կատարվելիք աշխատանքների բնույթի և պայմանների վերաբերյալ:

6. Այնուհետև հրավերում նշվում են Հայաստանի Հանրապետությունում հրավիրվողի կողմից իր կեցության ծախսերը, այդ թվում՝ նրա հնարավոր բուժօգնության և Հայաստանի Հանրապետությունից մեկնելու ծախսերը հոգալու մասին կամ այդ ծախսերը հրավիրվողի կողմից հոգալու պարտավորության մասին:

7. Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարություն և Հայաստանի Հանրապետությունում օտարերկրացիների աշխատանքի և զբաղվածության բնագավառում լիազորված պետական կառավարման մարմին ներկայացվող հրավերները հաստատվում են կնիքով և համապատասխան պաշտոնատար անձանց ստորագրությամբ:

8. Հրավերի ներքևի մասում տեղ է հատկացված հրավերը հաստատող մարմնի կողմից համապատասխան օտարերկրյա պետությունում առկա Հայաստանի Հանրապետության դիվանագիտական ներկայացուցչության կամ հյուպատոսական հիմնարկի հասցեով հրավիրվողի տվյալներն ուղարկելու վերաբերյալ նշում կատարելու համար:

(հավելվածը փոփ. 13.07.23 N 1175-Ն)

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի
ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

Հավելված N 4
ՀՀ կառավարության 2007 թվականի
նոյեմբերի 15-ի N 1439-Ն որոշման

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԱՅՑԵԼԵԼՈՒ ՀՐԱՎԵՐԻ ՏԻՊԱՅԻՆ ՁԵՎԸ

N_____

_____
(հրավիրողի ազգանունը, անունը, հայրանունը)

Բնակության (գտնվելու) վայրը_____հեռախոսահամարը_____
Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը_____ Ծննդավայրը _____
Աշխատանքի (ուսման) վայրը _____
Հրավիրողի անձնագրի սերիան և համարը, տալու և վավերականության ժամկետները
_____
_____
_____
(հրավիրվողի ազգանունը, անունը, հայրանունը)

Ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը_____Ծննդավայրը _____
Բնակության երկիրը և հասցեն_____
Քաղաքացիությունը_____Սեռը _____
Մասնագիտությունը կամ զբաղմունքի տեսակը _____
Հայաստանի Հանրապետություն այցելելու հրավերի նպատակը (աշխատանքային հրավերների
դեպքում՝ տեղեկատվություն գործատուի մոտ հրավիրվողի կողմից կատարվելիք
աշխատանքների բնույթի և պայմանների վերաբերյալ) _____
_____
_____
Հայաստանի Հանրապետություն այցելելու հրավերի ժամկետը _____
Հրավիրվողի հետ ժամանող մինչև 18 տարեկան երեխաների_____
(ազգանունները, անունները,
_____
(առկայության դեպքում՝ հայրանունները), նրանց ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը)

Հայաստանի Հանրապետությունում հրավիրվողի կեցության ծախսերը, այդ թվում՝ նրա հնարավոր
բուժօգնության և Հայաստանի Հանրապետությունից մեկնելու ծախսերը հոգալու է՝
հրավիրողը հրավիրվողը
_____
(ընդգծել)
_____ _____ 200 թ.

_____
(հրավիրողի ստորագրությունը)

Հաստատված հրավերն ուղարկվել է _____
_____
_____ _____ 200 թ.

Հայաստանի Հանրապետության
կառավարության աշխատակազմի

ղեկավար-նախարար **Մ. Թոփուզյան**

Փոփոխման պատմություն

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան
13.07.2023, N 1175-Ն	23.07.2023, N 1439-Ն

Փոփոխված ակտ

Փոփոխող ակտ	Համապատասխան ինկորպորացիան